2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի դասվարի աշխատանքային հաշվետվություն

Դասվար՝ Կ. Պետրոսյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

I.Կրթական

- Առաջնորդվելով ԿԳՍՄ նախարարության հաստատած չափորոշչային պահանջներով, ստեղծել եմ տարեկան թեմատիկ պլաններ բոլոր առարկաներից և ներկայացրել հաստատման:
- Տարվա կտրվածքով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսադասերը, բաց դասը իրականացվել է:
- Թեմատիկ պլանով նախատեսված թեմաները լիարժեք ուսուցանվել են: Տոնական և հիշատակի օրերի բացթողումները խտացվել և ուսուցանվել են կիսամյակների ընթացքում:
- Տրվել են նախատեսված բոլոր թեմատիկ աշխատանքները մայրենիից, մաթեմատիկայից /թվով ութական/, << Ես և շրջակա աշխարհը>> առարկայից՝ 2 թեմատիկ աշխատանք: Գործնական աշխատանքները ևս կատարվել են ըստ նախատեսվածի, որոնք հիմնականում նպաստել են առօրյայում և կյանքում գիտելիքները ճիշտ ու տեղին կիրառելուն:
- Ուսարվա ընթացքում փորձի փոխանակման նպատակով կատարվել են փոխադարձ դասալսումներ, վերլուծվել դրանք:
- Ուստարվա ընթացքում լրացուցիչ աշխատանքներ են տարվել ԿԱՊԿՈՒ աշակերտներ Այվազյան Նարեկի, Հովհաննիսյան Լուսինեի, Մալերյան Ռաֆայելի, Նարսիսյան Սմբատի և Ջաղինյան Էլենի և մյուս ետ մնացող աշակերտների հետ: Լրացուցիչ աշխատանքներ են տրվել լավ սովորող աշակերտներին:
- Բոլոր առարկաներից ծրագրերը կատարված են: Տրվել է ամառային հանձնարարություն: